# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenis.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 հունիսի 2025 թվականի N 0369-Ա

## <<ԻՄԻՋ Մ. Գ. >> ՍՊԸ-ԻՆ ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ՎԱՀԱՆԱԿ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով՝ << Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 18-րդ կետով, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> ՀՀ օրենքի պահանջներով և Վարդենիս համայնքի ավագանու 24.01.2025թ. N 2-Ն որոշման և հիմք ընդունելով <<ԻՄԻՋ Մ. Գ. >> ՍՊԸ-ի տնօրեն Աշոտ Կարապետյանի 05/06/2025 թվականի դիմում-հայտը որոշում եմ՝

1.Թույլատրել <<ԻՄԻՋ Մ . Գ . >> ՍՊԸ-ին Վարդենիս քաղաքի Երևանյան փողոցի ½ հասցեում, հանրախանութի մոտ գտնվող գովազդային վահանակի վրա Ա կողմում 18 ք/մ մակերեսով տեղադրված գովազդի ժամկետը ևս մեկ ամսով երկարաձգել՝ սկսած 10/06/2025 թվականից մինչև 30/06/2025 թվականը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

2025թ. հունիսի 09
ք. Վարդենիս

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenis.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հունիսի 2025 թվականի N 0370-Ա

## ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ 05-005-0238-0093 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ 0,19694 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 10 ԱՊՐԻԼԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ <<ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ 05-005-0238-0093 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ 0,19694 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԸ, 238.70 ՔՄ ՆԱԽԿԻՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑ ԵՎ 141.80ՔՄ ԱՎՏՈՏՆԱԿ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 0269-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՉԵՂՅԱԼ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Նորմատիվ իրավական ակտերի մասին ՀՀ օրենքի 38.1-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 42 և 43-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 13 հուլիսի 2006 թվականի N 1140-Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005 թվականի N 2387-Ն որոշումները, ինչպես նաև Վարդենիս համայնքի գլխավոր հատակագիծը՝ **որոշում եմ.**

1. Վարդենիս համայնքի Վարդենիս քաղաքի 05-005-0238-0093 կադաստրային ծածկագրով բնակավայրերի հասարակական կառուցապատման 0.19694 հա հողամասը ճանաչել որպես Վարդենիս համայնքի սեփականություն:
2. 0 .19694 հա հողամասում առկա շինությունները համաձայն ՀՀ կառավարության 24 հոկտեմբերի 2002 թվականի N 1684-Ա որոշմամբ հանդիսանում են որպես պետական սեփականություն:
3. Վարդենիս համայնքի Վարդենիս քաղաքի Գայի փողոցի 05-005-0238-0093 ծածկագրով 0. 19694 հա հողամասին տրամադրել Գայի փողոց 80 հասցե:
4. Չեղյալ համարել Վարդենիս համայնքի ղեկավարի 10 ապրիլի 2025 թվականի <<ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ 05-005-0238-0093 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ 0,19694 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԸ, 238 . 70 ՔՄ ՆԱԽԿԻՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑ ԵՎ 141 . 80ՔՄ ԱՎՏՈՏՆԱԿ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 0269-Ա որոշումը:
5. Կատարել իրավունքի պետական գրանցում:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

2025թ. հունիսի 11

ք. Վարդենիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenis.gegharquniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 հունիսի 2025 թվականի N 0371-Ա

## ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԵՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 05-083-0104-0088 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005 թվականի N 2374-Ն որոշմամբ, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածով և հաշվի առնելով այն հանգամանքը, որ 05-083-0104-0088 ծածկագրով գյուղատնտեսական վարելահողը ներկա դրությամբ սեփականաշնորհված չէ՝ **որոշում եմ**

1.Վարդենիս համայնքի Վանեվան բնակավայրի 05-083-0104-0088 ծածկագրով 0.00255 հա գյուղատնտեսական վարելահողը ճանաչել որպես Վարդենիս համայնքի սեփականություն:

2.Կատարել իրավունքի պետական գրանցում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

2025թ. հունիսի 11
ք. Վարդենիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenis.gegharquniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 հունիսի 2025 թվականի N 0372-Ա

## ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԾՈՎԱԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 05-051-0062-0003 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005 թվականի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգով և հիմք ընդունելով Ստեփան Նիկողոսյանի դիմումը **որոշում եմ**.

1.Վարդենիս համայնքի Ծովակ բնակավայրի 7-րդ փողոցի 1-ին նրբանցքի 05-051-0062-0003 ծածկագրով անշարժ գույքին տրամադրել Ծովակ բնակավայրի 7-րդ փողոց 1-ին նրբանցք 2 հասցե:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

2025թ. հունիսի 11
ք. Վարդենիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenis.gegharquniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 հունիսի 2025 թվականի N 0373-Ա

## ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԾՈՎԱԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 05-051-0082-0008 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005 թվականի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգով և հիմք ընդունելով Մարիա Վարդանյանի դիմումը **որոշում եմ.**

1.Վարդենիս համայնքի Ծովակ բնակավայրի 8-րդ փողոցի, 12-րդ նրբանցքի 05-051-0082-0008 ծածկագրով անշարժ գույքին տրամադրել Ծովակ բնակավայրի 8-րդ փողոց, 12-րդ նրբանցք 13 հասցե:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

2025թ. հունիսի 12
ք. Վարդենիս

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenis.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

12 հունիսի 2025 թվականի N 0374-Ա

## ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ <<ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ>> ԲԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՏՈՐՖԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 05-089-0018-0019 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,20005 ՀԱ <<ԱՅԼ ՀՈՂԵՐ>> ՀՈՂԱՄԱՍԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ, ԿԱՊԻ, ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԿՈՄՈՒՆԱԼ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ <<ԿԱՊԻ ՀՈՂԵՐ>> ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 43րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ, հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված <<ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի>> 2025 թվականի մարտի 7-ի թիվ 2/փ- 79 եզրակացությունը, Վարդենիս համայնքի ավագանու 25 մարտի 2025 թվականի N 43-Ա որոշումը և Տելեկոմ Արմենիա ԲԲ ընկերության 28.11.2024 թվականի դիմումը՝ **որոշում եմ.**

1. ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի վարչական սահմաններում գտնվող <<Տելեկոմ Արմենիա>> ԲԲ ընկերության սեփականություն հանդիսացող (Սեփականության իրավունքի վկայական N 24092024-05-0064) Տորֆավան բնակավայրի 05-089-0018-0019 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության 0,20005 հա <<այլ հողեր>> հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը փոփոխել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտի հողերի նպատակային նշանակության <<կապի հողեր>> գործառնական նշանակության՝ բջջային կապի կայան տեղադրելու համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՇՈՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ

2025թ. հունիսի 12
ք. Վարդենիս

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenis.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 հունիսի 2025 թվականի N 0375-Ա

## ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԿՈՒՏԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 05-058-0021-0004 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,1 ՀԱ <<ԱՅԼ ՀՈՂԵՐ>> ՀՈՂԱՄԱՍԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ, ԿԱՊԻ, ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԿՈՄՈՒՆԱԼ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ <<ԿԱՊԻ ՀՈՂԵՐ>> ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ, հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված <<ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի>> 2025 թվականի փետրվարի 10-ի թիվ 2/փ- 56 եզրակացությունը, Վարդենիս համայնքի ավագանու 25 մարտի 2025 թվականի N 41-Ա որոշումը և Տելեկոմ Արմենիա ԲԲ ընկերության 04.07.2024 թվականի դիմումը՝ **որոշում եմ.**

1. ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի վարչական սահմաններում գտնվող Վարդենիս համայնքի սեփականություն հանդիսացող (Սեփականության իրավունքի վկայական N 10042024-05-0073) Կուտական բնակավայրի 05-058-0021-0004 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության 0,1 հա <<այլ հողեր>> հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը փոփոխել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտի հողերի նպատակային նշանակության <<կապի հողեր>> գործառնական նշանակության՝ բջջային կապի կայան տեղադրելու համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

2025թ. հունիսի 12
ք. Վարդենիս

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
## ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenis.gegharquniq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

12 հունիսի 2025 թվականի N 0376-Ա

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՆԱԽԿԻՆ ԲՆԱԿԻՉ ԱՅԺՄ ՀԱՆԳՈՒՑՅԱԼ՝ ՀԱՅԿ ՊԱՊԻՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ 2005Թ-Ի ԱՊՐԻԼԻ ՔՍԱՆ ՀԻՆԳԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՈՎ ՏՐՎԱԾ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ << ՔԵԹԻ- ՅԱՆԽ >> ՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 13ՀԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂԸ ՆՐԱ ԻՐԱՎԱՀԱՋՈՐԴ ԱՌԱՋԻ ՀԵՐԹԻ ԺԱՌԱՆԳ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԿԻՆԸ՝ ՀԵՐԻՔՆԱԶ ՎԱՆՈՒՇԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի, հողային օրենսգրքի 90-րդ հոդվածի և 95-րդ հոդվածի 5-րդ կետի դրույթները և հիմք ընդունելով Հերիքնազ Հարությունյանի 26.05.2025թ-ի դիմումը, 2024թ-ի ապրիլի տասնութի ըստ օրենքի տրված ժառանգական վկայագիրը ժառանգության գործ 108 որոշում եմ.

1.Երևան քաղաքի նախկին բնակիչ այժմ հանգուցյալ Հայկ Պապինի Հարությունյանի 2005թ-ի ապրիլի քսան հինգի վարձակալության վկայական N 0032254 Վարդենիս համայնքի Քեթի- Յանխ վայրում վարձակալված 13 հա գյուղատնտեսական նշանակության վարելահողը պայմանագրում մնացած ժամկետով և վարձավճարով վարձակալությամբ տրամադրել հանգուցյալ Հայկ Պապինի Հարությունյանի իրավահաջորդ առաջի հերթի ժառանգորդ Հերիքնազ Հարությունյանին:

2. 13հա գյուղատնտեսական նշանակության վարելահողի տարեկան վարձավճարի չափը 52000 (հիթսուն երկու հազար) ՀՀ դրամ:

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2025թ. հունիսի 12
ք. Վարդենիս

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenis.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

12 հունիսի 2025 թվականի N 0377-Ա

## ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՆԱԽԿԻՆ ԲՆԱԿԻՉ ԱՅԺՄ ՀԱՆԳՈՒՑՅԱԼ՝ ՀԱՅԿ ՊԱՊԻՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ 2002Թ-Ի ՀՈՒՆԻՍԻ ՏԱՍՆԻՆՆԻՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՈՎ ՏՐՎԱԾ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵԾ ՄԱՍՐԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 8ՀԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂԸ ՆՐԱ ԻՐԱՎԱՀԱՋՈՐԴ ԱՌԱՋԻ ՀԵՐԹԻ ԺԱՌԱՆԳ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԿԻՆԸ՝ ՀԵՐԻՔՆԱԶ ՎԱՆՈՒՇԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի, հողային օրենսգրքի 90-րդ հոդվածի և 95-րդ հոդվածի 5-րդ կետի դրույթները և հիմք ընդունելով Հերիքնազ Հարությունյանի 26.05.2025թ-ի դիմումը, 2024թ-ի ապրիլի տասնութի ըստ օրենքի տրված ժառանգական վկայագիրը ժառանգության գործ 108 որոշում եմ.

1.Երևան քաղաքի նախկին բնակիչ այժմ հանգուցյալ Հայկ Պապինի Հարությունյանի 2002թ-ի հունիսի տասնիննին վարձակալության վկայականով N 0028096 Մեծ Մասրիկ բնակավայրից վարձակալված 8 հա գյուղատնտեսական նշանակության վարելահողը պայմանագրում մնացած ժամկետով և վարձավճարով վարձակալությամբ տրամադրել հանգուցյալ Հայկ Պապինի Հարությունյանի իրավահաջորդ առաջի հերթի ժառանգորդ Հերիքնազ Հարությունյանին:

2. 8 հա գյուղատնտեսական նշանակության վարելահողի տարեկան վարձավճարի չափը 51456 (հիթսուն մեկ հազար չորս հարյուր հիթսուն վեց ) ՀՀ դրամ:

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

2025թ. հունիսի 12
ք. Վարդենիս

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
## ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenis.gegharquniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 հունիսի 2025 թվականի N 0378-Ա

### ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՆԱԽԿԻՆ ԲՆԱԿԻՉ ԱՅԺՄ ՀԱՆԳՈՒՑՅԱԼ՝ ՀԱՅԿ ՊԱՊԻՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ 2010Թ-Ի ՀՈՒՆԻՍԻ ՏԱՍԻՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՈՎ ՏՐՎԱԾ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵԾ ՄԱՍՐԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 2,24 ՀԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՀՈՂԱՏԵՍՔԸ ՆՐԱ ԻՐԱՎԱՀԱՋՈՐԴ ԱՌԱՋԻ ՀԵՐԹԻ ԺԱՌԱՆԳ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԿԻՆԸ՝ ՀԵՐԻՔՆԱԶ ՎԱՆՈՒՇԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի, հողային օրենսգրքի 90-րդ հոդվածի և 95-րդ հոդվածի 5-րդ կետի դրույթները և հիմք ընդունելով Հերիքնազ Հարությունյանի 26.05.2025թ-ի դիմումը, 2024թ-ի ապրիլի տասնութի ըստ օրենքի տրված ժառանգական վկայագիրը ժառանգության գործ 108 որոշում եմ.

1.Երևան քաղաքի նախկին բնակիչ այժմ հանգուցյալ Հայկ Պապինի Հարությունյանի 2010թ-ի հունիսի տասին վարձակալության վկայական N 0148029 Մեծ Մասրիկ բնակավայրից վարձակալված 2,24 հա՛ գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքը պայմանագրում մնացած ժամկետով և վարձավճարով վարձակալությամբ տրամադրել հանգուցյալ Հայկ Պապինի Հարությունյանի իրավահաջորդ առաջի հերթի ժառանգորդ Հերիքնազ Հարությունյանին:

2 . 2,24 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքի տարեկան վարձավճարի չափը 4928 (չորս հազար ինը հարյուր քսանութ ) ՀՀ դրամ:

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

2025թ. հունիսի 12
ք. Վարդենիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenis.gegharquniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

12 հունիսի 2025 թվականի N 0379-Ա

## ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՆԱԽԿԻՆ ԲՆԱԿԻՉ ԱՅԺՄ ՀԱՆԳՈՒՑՅԱԼ՝ ՀԱՅԿ ՊԱՊԻՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ 2002Թ-Ի ՀՈՒՆԻՍԻ ՏԱՍՆԻՆՆԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՈՎ ՏՐՎԱԾ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵԾ ՄԱՍՐԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 9 ՀԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂԸ ՆՐԱ ԻՐԱՎԱՀԱՋՈՐԴ ԱՌԱՋԻ ՀԵՐԹԻ ԺԱՌԱՆԳ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԿԻՆԸ՝ ՀԵՐԻՔՆԱԶ ՎԱՆՈՒՇԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի, հողային օրենսգրքի 90-րդ հոդվածի և 95-րդ հոդվածի 5-րդ կետի դրույթները և հիմք ընդունելով Հերիքնազ Հարությունյանի 26.05.2025թ-ի դիմումը, 2024թ-ի ապրիլի տասնութի ըստ օրենքի տրված ժառանգական վկայագիրը ժառանգության գործ 108 որոշում եմ.

1.Երևան քաղաքի նախկին բնակիչ այժմ հանգուցյալ Հայկ Պապինի Հարությունյանի 2002թ-ի հունիսի տասնիննի վարձակալության վկայական N 0028095 Մեծ Մասրիկ բնակավայրից վարձակալված 9 հա գյուղատնտեսական նշանակության վարելահողը պայմանագրում մնացած ժամկետով և վարձավճարով վարձակալությամբ տրամադրել հանգուցյալ Հայկ Պապինի Հարությունյանի իրավահաջորդ առաջի հերթի ժառանգորդ Հերիքնազ Հարությունյանին:

2. 9 հա գյուղատնտեսական նշանակության վարելահողի տարեկան վարձավճարի չափը 36576 (երեսուն վեց հազար հինգ հարյուր յոթանասուն վեց) ՀՀ դրամ:

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ — ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

2025թ. հունիսի 12
ք. Վարդենիս

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenis.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

13 հունիսի 2025 թվականի N 0380-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻՆ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԽԱԿՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԶՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿ ՓՈՂՈՑԻ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՏՐՎԱԾ 15.08.2024 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 61 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 6-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 19 մարտ 2015 թվականի N 596 որոշմամբ հաստատված կարգը և <<ԱՐԱՄ ԵՎ ԲԱԳՐԱՏ>> ՍՊԸ տնօրենի Ա. Հակոբյանի 26.05.2025 թվականի գրությունը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիսի համայնքապետարանին Վարդենիս համայնքի Կախակն բնակավայրի Զորավար Անդրանիկ փողոցի ասֆալտապատման աշխատանքների համար տրված 15.08.2024 թվականի թիվ 61 շինարարության թույլտվության ժամկետը երկարաձգել 3 ամսով՝ մինչև 13.03.2025 թվականը՝ ավարտական ակտ ստանալու համար:
2. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման և հողաշինության բաժնի վրա:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

2025թ. հունիսի 13
ք. Վարդենիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenis.gegharquniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 հունիսի 2025 թվականի N 0381-Ա

## ԱՆՆԱ ՀԱՅԿԱԶԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐՃԱՂԲՅՈՒՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 05-055-0010-0004 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,39905 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. N 2387-Ն որոշմամբ սահմանված կարգով և հիմք ընդունելով <<Թիվ 28 ՇՄԾ>> ԲԲԸ-ի կողմից 19.05.2025 թվականին տրված շինությունն երի տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունը և Աննա Հայկազի Կարապետյանի դիմումը՝ **որոշում եմ.**

1. Վարդենիս համայնքի Կարճաղբյուր բնակավայրի 10-րդ փողոցի 05-055-0010-0004 կադաստրային ծածկագրով գույքին տրամադրել Կարճաղբյուր բնակավայր, 10-րդ փողոց, 12 հասցե:

2. Վարդենիս համայնքի Կարճաղբյուր բնակավայրի 10-րդ փողոց, 12 հասցեի 05-055-0010-0004 կադաստրային ծածկագրով հողամասում 2007 թվականին ինքնակամ կառուցված կիսանկուղ՝ 149,04 քմ (ներքին մակերես՝ 115,60 քմ), բնակելի տուն՝ 149,04 քմ (ներքին մակերես՝ 110,30 քմ), Բ.Պ աստիճանահարթակ՝ 26,10 քմ և 2019 թվականին կառուցված անասնաշենք՝ 11,14 քմ (ներքին մակերես՝ 7,70 քմ) մակերեսներով շինությունները (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 20233WNZ2R) չեն խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք՝ ճանաչել օրինական, որպես՝ Աննա Հայկազի Կարապետյանի սեփականություն:

3. Օրինականացումը իրականացնել հետևյալ սահմանված գներով.

3.1 Կիսանկուղ՝ 149,04 քմ x 10000 x 0.0874 = 130265 ՀՀ դրամ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenis.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 հունիսի 2025 թվականի N 0382-Ա

## ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԿԱՐՃԱՂԲՅՈՒՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 05-055-0010-0005 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,00254 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԿԱՌՈՒՅՑԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 42 և 43-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 18 մայիսի 2006 թվականի N 731-Ն, 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն և 29.12.2005 թվականի N 2387-Ն որոշումներով, հիմք ընդունելով <<ԹԻՎ 28 ՇՄԾ>> ԲԲ ընկերության կողմից 19.05.2025 թվականին տրված ինքնակամ իրականացված անասնաշենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունը ինչպես նաև Աննա Հայկազի Կարապետյանի դիմումը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ 0,00254 հա հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի առաջացնում սերվիտուտ՝ **որոշում եմ.**

1.Վարդենիս համայնքի Կարճաղբյուր բնակավայրի 10-րդ փողոցի 05-055-0010-0005 կադաստրային ծածկագրով գույքին տրամադրել Կարճաղբյուր բնակավայր, 10-րդ փողոց, 12/2 հասցե:

2. ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի N 912-Ն որոշման 3-րդ կետի՝ հողամասի գործառնական նշանակությունը համարվում է փոփոխված, որպես բնակելի կառուցապատման:

3. Վարդենիս համայնքի, Կարճաղբյուր բնակավայրի 10-րդ փողոց, 12/2 հասցեում Աննա Հայկազի Կարապետյանի կողմից 2019 թվականին ինքնակամ կառուցված անասնաշենք՝ 25,35 քմ (ներքին մակերես 19,60 քմ) և սպասարկման համար նախատեսված 0,00254 հա հողամասը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2023P9F5EE) ճանաչել օրինական, որպես Վարդենիս համայնքի սեփականություն:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenis.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 հունիսի 2025 թվականի N 0383-Ա

## ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԿՈՒՆՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 9-ՐԴ ՓՈՂՈՑ 10 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ 0,30353 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ, ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՌԱՆԳԱԿԱՆ ԳՈՒՅՔԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածով, Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության 10.06.2008թ. <<Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՕ-117-Ն օրենքով, Հայաստանի Հանրապետության 27.04.2010թ. ՀՕ-50-Ն օրենքի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեի ղեկավարի 18.04.2021թ. թիվ 75-Ն հրամանով և հիմք ընդունելով Արտեմ Ռազմիկի Սիմոնյանի դիմումը (ծնված՝ 02.06.1967թ.), 10.06.2025 թվականին տրված ըստ օրենքի և ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագրերը՝ ժառանգական գործեր՝ 125 և 126, որակավորման վկայական ունեցող անձի կողմից կազմված հողամասի հատակագիծը և այն հանգամանքը, որ բնակավայրերի՝ բնակելի կառուցապատման 0,30353 հա հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի առաջացնում սերվիտուտ՝**որոշում եմ.**

1. Անահիտ Օհանջանի Սիմոնյանի ժառանգորդ՝ Արտեմ Ռազմիկի Սիմոնյանին (ծնված՝ 02.06.1967թ.), Ռազմիկ Դավիթ Սիմոնյանի ժառանգորդ՝ Արթուր Արտեմի Սիմոնյանին (ծնված՝ 02.02.1993թ.) և համասեփականատեր Արմեն Ռազմիկի Սիմոնյանին (ծնված՝ 20.04.1973թ.) պատկանող Ակունք բնակավայր, 9-րդ փողոց 10 հասցեում գտնվող հողամասում 1970 թվականին կառուցված բնակելի տուն՝ 109,90 քմ, 1980 թվականին կառուցված հացատուն՝ 21,50 քմ, անասնաշենք՝ 48,00 քմ, ավտոտնակ՝ 30,60 քմ, անասնաշենք՝ 26,00 քմ, անասնաշենք՝ 40,10 քմ, խոզանոց՝ 16,40 քմ, խորդանոց՝ 27,80 քմ, ծածկ՝ 59,30 քմ, 1995 թվականին կառուցված ծածկ՝ 20,20 քմ և խորդանոց՝ 44,80 քմ մակերեսով շինությունները ճանաչել օրինական, որպես Արտեմ Ռազմիկի, Արթուր Արտեմի և Արմեն Ռազմիկի Սիմոնյանների սեփականություն:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenis.gegharquniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 հունիսի 2025 թվականի N 0384-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ «Համայնքային ծառայության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի դրույթներով՝ **որոշում եմ.**

1. 2025 թվականի հուլիսի 22-ին ժամը 12:00-ին հայտարարել Հայաստանի Հանրապետության Վարդենիսի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության հետևյալ թափուր պաշտոնների մրցույթ.

1)Աշխատակազմի համայնքային ծառայության առաջատար պաշտոնների խմբի երրորդ ենթախմբի Վարդենիսի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման և հողաշինության բաժնի գլխավոր մասնագետի (պաշտոնի անձնագրի ծածկագիր՝ 2.3-1):

2)Աշխատակազմի համայնքային ծառայության առաջատար պաշտոնների խմբի երրորդ ենթախմբի Վարդենիսի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետի (պաշտոնի անձնագրի ծածկագիր՝ 2.3-10):

3)Աշխատակազմի համայնքային ծառայության առաջատար պաշտոնների խմբի երրորդ ենթախմբի Վարդենիսի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետի (պաշտոնի անձնագրի ծածկագիր՝ 2.3-11):

4)Աշխատակազմի համայնքային ծառայության առաջատար պաշտոնների խմբի երրորդ ենթախմբի Վարդենիսի համայնքապետարանի աշխատակազմի գնումների, զարգացման ծրագրերի, տուրիզմի, առևտրի, սպասարկման և գովազդի բաժնի գլխավոր մասնագետի (պաշտոնի անձնագրի ծածկագիր՝ 2.3-6):